# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ
# ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի ԹԻՎ Պ-751 ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ք. Երևան «17» հունվարի 2025թ.

Հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի հունվարի 17 թիվ 72 -Ա հրամանը՝ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման 4.10.2024թ. թիվ Պ-751 պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող N 3 հավելված (Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորություններ) ուժը կորցրած ճանաչել և հաստատել նոր N 3 հավելվածը:

Սույն փոփոխությունը համարվում է՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-751 պայմանագրի անբաժանելի մասը:

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

(անունը, ազգանունը)

Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274

(ստորագրությունը)

17 հունվարի 2025թ.

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ

«ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿԱՆԻ» ՍՊԸ

ԱՐՏԱԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

17 հունվարի 2025թ.

Հավելված N 3
Օգտակար հանածոյի արդյունահանման
17 հունվարի 2025թ. N Պ-751
ընդերքօգտագործման պայմանագրի
«Հավելված N 3
Օգտակար հանածոյի արդյունահանման 4.10.2024թ.
N Պ-751 ընդերքօգտագործման պայմանագրի»

## Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորություններ

ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Հովտաշեն և Մասիս համայնքի Նորամարգ բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափը և կատարման ժամկետները

| Հ/Հ | Պարտավորությունների անվանումը | Կատարման ժամկետը | Ներդրումների չափը, հազ. դրամ |
|---|---|---|---|
| 1. | Աջակցություն համայնքների զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին՝ վճարելով համայնքի բյուջե: | Յուրաքանչյուր տարի | 1500.0 (Արտաշատ խոշորացված համայնքին)<br>1000.0 (Մասիս խոշորացված համայնքին) |
| 2. | Աջակցություն համայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման աշխատանքներին | Ըստ անհրաժեշտության | Տեխնիկայի տրամադրում |
| 3. | Բանվորական և տեխնիկական նորաբաց աշխատատեղերի համալրում ազդակիր համայնքների բնակիչներով | Ըստ մասնագիտական համապատաս-խանության՝ պահպանելով ընդգրկվածության հավասար հարաբերակցություն | - |
| 4 | Բեռնատար տրանսպորտային միջոց /ինքնաթափ/ | «Արևմտյան Կանի» ՍՊԸ պարտավորվում է ոչ ուշ,քան մինչև 2025թ 1-ին եռամսյակի ավարտը լիզինգի պայմանագրով ձեռք բերել ինքնաթափ բեռնատար տրանսպորտային միջոց (սպիտակ գույք) | Պայմանագրի գործողության ընթացքում օգտագործել ի շահ համայնքի, իսկ լիզինգի պայմանագրի գործողության ավարտից հետո նվիրաբերում ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքին՝ համայնքի կարիքների համար օգտագործելու նպատակով |